

**ԷԹՆԻԿ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ ԹՈՆԻ ՍՈՐԻՍՈՆԻ
«ՍՈՂՈՍՈՆԻ ԵՐԳԸ» ՎԵՊՈՒՄ**

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v4i63.73

Ամփոփում

Հոդվածում ուսումնասիրված են «Սողոմոնի երգը» վեպի գաղափարական և գեղարվեստական առանձնահատկությունները: Կերպարների և պլոտեի վերլուծության միջոցով բացահայտված է վեպի գլխավոր թեման, որի առանցքում անձի ազատության և նրա էթնիկ ինքնության կապն է: Ազատության գաղափարն արտահայտված է թոփշի և դեպի ընտանեկան ու էթնիկ ակունքները տանող խորհրդանշական և այլաբանական պատկերների միջոցով: Հոդվածում նշվում է, որ անձի ազատությունը հանգեցնելով ինքնության վերագտման գաղափարին՝ Թոնի Մորիսոնը Մոզական ռեալիզմի փիլիսոփայության տիրույթում և Մոզական ռեալիզմի արտահայտչամիջոցներով տալիս է երջանկության և հավերժության իր սահմանումը:

Բանալի բառեր ու բառակապակցություններ. Թոնի Մորիսոն, մոզական ռեալիզմ, ամերիկյան ժամանակակից գրականություն, «Սողոմոնի երգը», էթնիկ ինքնության թեման:

Ներածություն

Ներկայիս արագ փոփոխվող աշխարհում, երբ գիտատեխնիկական առաջընթացը և գլոբալացման գործընթացներն իրենց անմիջական ազդեցությունն են ունենում ժամանակակից մարդու հոգեբանության և կենսակերպի վրա, ինքնության պահպանումը կարելի է համարել մարդկությանն ուղղված մարտահրավերներից մեկը: Անհատի ինքնությունը, որն աղերսվում է նաև էթնիկ ինքնության հետ, դարձել է ժամանակակից աշխարհի խոցելի հիմնախնդիրներից մեկը, որի հանգուցալուծումից կախված է մշակույթներով միմյանցից տարբերվող ազգերի լինելության հարցը: Բնական է, որ այդ խնդրին առավել առնչվում են փոքր ժողովուրդները, որոնց համար այժմյան գլոբալացման ճնշմանը դիմակայելը առավել դժվար է: Ժամանակակից կյանքի համահարթեցված սոցիոմշակութային մոդելը գալիս է փոխարինելու ավանդույթներով և յուրահատկություններով հարուստ ազգային մշակույթներին:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչև 20-րդ դարի սկիզբը աֆրոամերիկյան գրականության մեջ Աֆրիկան որևէ տեղ չունեւ, իսկ

աֆրոամերիկացիները բացարձակապես հետաքրքրված չէին իրենց արմատներով և պատմությամբ: Ինչպես փաստում է պատմաբան Հարոլդ Այզենսթեյնը, աֆրոամերիկացիների զգալի մասը ամաչում էր աֆրիկյան ծագումից՝ չուզենալով որևէ կապ ունենալ նախնիների հայրենիքի հետ: «Աֆրիկյան «մթություն» էր, որը նրանք ուզում էին թողնել անցյալում, որպեսզի ձգվեին դեպի սպիտակամորթների աշխարհի «լույսը...» (10): Սակայն 20-րդ դարի սկզբին աֆրոամերիկյան գրականության մեջ Աֆրիկայի հանդեպ վերաբերմունքը ամբողջովին փոխվում է, և այն սկսում է իդեալականացվել՝ ներկայանալով որպես նախնիների հայրենիք, որպես մի վայր, որտեղ մարդիկ ազատ էին և երջանիկ: Այդ ժամանակ մի շարք հասարակական գործիչներ հանդես են գալիս ելույթներով և հայտարարություններով՝ բարձրացնելով աֆրիկյան ժառանգության և ինքնության պահպանության հարցը: Աֆրոամերիկացի գրող և պատմաբան Ջոն Հերիք Քլարքը քննադատում է այն տեսակետը, որ աֆրոամերիկացիների պատմությունը սկսվում է Ամերիկայում իրենց գաղութացումից հետո (11): Համաձայն աֆրոամերիկացի պատմաբան և գրող Արթուր Շոմբուրգի՝ աֆրոամերիկացիներին «առանց պատմության մարդիկ» համարելու պատճառն այն էր, որ նրանց ընկալում էին որպես «գնահատանքի արժանի մշակույթ չունեցող» մարդկանց (12):

Թոնի Մորիսոնն այն գրողներից է, որը զգացել է ժամանակի զարկերակը և իր վեպերում ոչ միայն արտացոլել է աֆրոամերիկյան կյանքն իր բոլոր նրբերանգներով, այլև ցանկացել է իր ստեղծագործությունների միջոցով ազդել այդ կյանքի ընթացքին: Դրա վկայությունը նաև «Մոդոմոնի երգը» վեպն է, որը հրատարակվել է այն տարիներին, երբ Ամերիկայում վերելք էին ապրում էթնիկ ինքնաճանաչողության տրամադրությունները և արվեստներում, մասնավորապես գրականության մեջ արդիական էր դարձել ազգային ինքնությունների ճանաչման և պահպանման թեման: Հենց յոթանասունական թվականներին են ի հայտ եկել «Սևերի արվեստ», «Սևերի հպարտություն» շարժումները, որոնց նպատակն էր սևամորթներին քաջալերել հավատարիմ մնալ աֆրոամերիկյան սովորույթներին և աֆրիկյան մշակութային ժառանգությանը (4):

«Մոդոմոնի երգը» Թոնի Մորիսոնի երրորդ վեպն է: Այն հրատարակվել է 1977 թվականին և մեկ տարի անց արժանացել է Գրաքննադատների ազգային ընկերակցության մրցանակին, իսկ հետագայում՝ 1993-ին արդեն այն հատուկ հիշատակվում է Մորիսոնին Նոբելյան մրցանակ շնորհելու արարողության ժամանակ:

Մեթոդաբանությունը

Թոնի Մորիսոնի ոճին բնորոշ է զգացմունքայնությունը, որը դրսևորվում է բազմաթիվ հոգեբանական կերպարների կերտման միջոցով:

Ուստի անհնար է ուսումնասիրել Մորիսոնի ստեղծագործությունը՝ փորձելով շրջանցել կերպարների հոգեբանության վերլուծությունը և չկիրառելով գրականագիտության մեջ հիմնարար համարվող հոգեբանական մեթոդը: Հետազոտության ընթացքում վեպն ուսումնասիրվել է նաև մոգական ռեալիզմի մեթոդաբանության տեսանկյունից՝ բացահայտելով այն առանձնահատկությունները, որոնք բնորոշ են այդ ուղղությանը: Խորհրդանշանների կիրառումը նույնպես մոգական ռեալիզմի առանձնահատկություններից է, որը, կարծես, օգնում է գրողին ստեղծագործության գաղափարը ընթերցողին ներկայացնելու համար: Ուսումնասիրության մեջ կիրառվել է նաև նշանագիտական մեթոդը, որի միջոցով առանձնացվել և ուսումնասիրվել են վեպում տեղ գտած խորհրդանշանները և այլաբանական պատկերները՝ որպես նշանային համակարգի բաղադրիչներ: Ինչպես նաև հետազոտության ընթացքում օգտագործվել է գեղագիտական մեթոդը, որի միջոցով մեկնաբանվել են ստեղծագործության ռճական առանձնահատկությունները:

Քննարկում

Բանահյուսությունը աֆրոամերիկացիների կյանքում և մշակույթի մեջ կարևոր դերակատարում ունի: «Սողոմոնի երգը» վեպը հիմնված է տարբեր պատմությունների, առասպելների և լեգենդների վրա, մասնավորապես, պետք է նշել Աստվածաշնչյան «Երգ երգոցը», թռչող աֆրիկացու մասին առասպելը և ժողովրդական հեքիաթը: Առասպելը մի կախարդ բժշկի մասին է, որը ստրուկներին տալիս է թռչելու կարողություն, ինչի շնորհիվ էլ նրանք կարող էին վերադառնալ Աֆրիկա և լինել ազատ: Ինչպես առասպելում, այդպես էլ Թոնի Մորիսոնի վեպում, թռիչքը ազատության խորհրդանիշ է: Սակայն, եթե առասպելում ազատության գաղափարը կապված է Աֆրիկա վերադառնալու հետ, ապա վեպում հեղինակը ազատությունը նույնացնում է էթնիկ ակունքներին վերադառնալու, ինչպես նաև ընտանեկան պատմության, ավանդույթների և, ընդհանրապես, մշակութային ինքնության պահպանման հետ: Ազատության թեման, որը խորհրդանշվում է թռիչքի պատկերի միջոցով, Մոգական ռեալիզմ ուղղության մեջ, անշուշտ, առանցքային տեղ ունի: Սակայն այդ թեման լինելով շատ բազմաշերտ, յուրաքանչյուր գրողի ստեղծագործության մեջ բացահայտվում է յուրովի և տարբեր եղանակներով:

Ինչ վերաբերում է Աստվածաշնչյան թեմաներին, ապա պետք է նշել, որ Մորիսոնը դրանց բազմիցս է անդրադարձել: Այդ առնչությամբ գրաքննադատ Էմի Հանգերֆորդը իր «Հետադարձական հավատամք» Ամերիկյան գրականությունը և կրոնը 1960-ից հետո» (Post Modern Belief:

American Literature and Religion Since 1960) գրքում՝ խոսելով Մորիսոնի «Մողմունի երգը» գրքի մասին, գրում է, որ Մորիսոնի վարպետության շնորհիվ «Մողմունի երգը» վեպը, կարծես, Աստվածաշնչյան «Երգ երգոցի» արձագանքը լինի, որը ստվերում է նախկինում այդ թեմային անդրադարձած բոլոր մյուս տեքստերը (2):

Այլ կարծիք է հայտնում գրաքննադատ Պատրիկ Ռեարդոնը, որը գրում է.- «Մողմունի երգը» վեպի հիմնական թեման Աստվածաշունչն է, սակայն ոչ ինստիտուցիոնալ համոզմունքների Աստվածաշունչը. Մորիսոնն օգտագործում է Աստվածաշունչն իր նպատակների համար: Վեպի վերնագիրը, իհարկե, հիշեցնում է Աստվածաշնչի «Մողմունի երգը», կամ ինչպես այն ավելի հաճախ անվանում են՝ «Երգ երգոցը», որը երկու մարդկանց սիրո մասին է, սակայն Մորիսոնի վեպը մեկ մարդու՝ ինքն իրեն բացահայտելու և սիրելու մասին է» (9): Այստեղ հարկ է նշել, որ վեպում այդ ինքնաբացահայտումը, ավելին՝ անհատի ձևավորումը, հնարավոր է դառնում ոչ միայն ինքն իրեն սիրելու, այլև իր տոհմական արմատներին վերադառնալու միջոցով: «Հայրերը պետք է սավառնեն վերևում: Որդիները պետք է իմանան նրանց անունները», -գրում է Մորիսոնը: Վեպի գլխավոր ուղերձը արմատներին մոտ լինելու կարևորությունն է, էթնիկ ինքնաձանաչողության դերը անձի ձևավորմանման և լիարժեքության մեջ : «Նյու Յորք Թայմս» ամսագրին տված հարցազրույցում Մորիսոնն ասել է. «Քանի դեռ երեխաները գիտեն «իրենց ազգանունները», այսինքն գիտեն ովքեր են եղել իրենց հայրերը, իրենց նախնիները, նրանք վտանգներով լի այս կյանքում ի վիճակի կլինեն գլուխ հանել անգամ առանց հոր դաստիարակության: Հայրերը կարող են թռչել, կարող են հեռանալ, բայց երեխաները միշտ կհիշեն նրանց՝ ումանց փառաբանելով, ումանց էլ մեղադրելով: Վեպում հնչող «երգը» հենց այդ մասին է: «Բոլոր տղամարդիկ լքել են ինչ-որ մեկին, ինչ-որ մի օր, և երեխաներն են, որ հիշում են նրանց, երգեր են երգում նրանց մասին, առասպելաբանում և դարձնում են ընտանիքի պատմության մի մաս» (5):

Հարցազրույցներից մեկում անդրադառնալով իր կրոնական դաստիարակությանը՝ Մորիսոնն ասում է.- «Ես մեծացել եմ մի ընտանիքում, որտեղ բոլորը հավատացյալ էին. դա նրանց լեզվամտածողության մի մասն էր: Նրանց միտքը Աստվածաշնչյան ակունքներ ուներ, և նրանք ինքնարտահայտվում էին հենց այդ եղանակով: Սակայն նրանք դա միաձուլում էին մեկ այլ երևույթի հետ, ինչը, կարծում եմ, Աստվածաշնչից չէր վերցված: Նրանք հիշում և կարևորում էին տեսիլքները, նշանները և կանխագագումները: Բայց այդտեղ կարևորն այն է, որ ես ինքս այդպես էի մտածում և հավատում էի այդ ամենին» (1):

Պետք է համաձայնել գրող, գրականագետ Ռեյնոլդս Փրայսի հետ, որը վեպի մասին գրել է հետևյալը. «Մոդոմոնի երգը» վեպը գրված չէ ընտանեկան վեպերի մեծ մասին բնորոշ ռեալիստական ոճով: Վեպում ֆանտաստիկայի, առակի, երգի, այլաբանության կիրառումն այնքան բնական է, շարունակական և անկանխատեսելի, որ այդ ամենը, կարծես, արտուրդի ժանրից լինի, մինչդեռ արտուրդը Մորիսոնի ոչ ռազմավարությունն է և ոչ էլ նպատակը: Թվում է՝ նպատակը ցավալիորեն բացահայտված և հմտորեն թաքցված համոզմունքներն են մարդկային կյանքում առկա գերբնականի մասին, որը ներկայացվում է մեկ ընտանիքի պատմության միջոցով» (6):

Մորիսոնն իր վեպը սկսում է չիրականացած թոփափ նկարագրությամբ՝ մինչև պատումի վերջը ընթերցողին պահելով դրա իրականացումը տեսնելու սպասման մեջ: Վեպի բազմաձյուղ սյուժեի առանցքում գլխավոր հերոսի՝ Միլքմենի շուրջ ծավալվող գործողություններն են, որի միջոցով Մորիսոնը զարգացնում է իր գլխավոր ասելիքը: Ընթերցողն ականատես է լինում, թե ինչպես է Միլքմենը չորս տարեկան հասակում իմանալով, որ անկարող է թոչել՝ (քանի որ թոչել կարող են միայն թոչուններն ու ինքնաթիռները) կորցնում է կյանքի և մարդկանց հանդեպ իր հետաքրքրությունը:

«Մոդոմոնի երգը» վեպը սկսվում է ցրտաշունչ ձմեռային տեսարանով, երբ ապահովագրական ընկերության աշխատակից Ռոբերտ Սմիթը փորձում է թոչել փոքր քաղաքի ամենաբարձր շենքի տանիքից: Գրականագետ Ռալֆ Սթորին, իր «Էքսկուրսիա դեպի Սևերի աշխարհ. «Յոթ օրերը» Թոնի Մորիսոնի «Մոդոմոնի երգը» վեպում» հոդվածում թոփափ տեսարանը մեկնաբանում է որպես ինքնասպանություն (7): Այս մոտեցման հետ պետք է չհամաձայնել այն հիմնավորմամբ, որ նախ ինքնասպանությունը որպես իրական գործողություն, անհամատեղելի է «մոգական ռեալիզմ» գեղարվեստական մեթոդի հետ: Հետևաբար, պետք է նշել, որ վեպը սկսվում է ոչ թե ինքնասպանության, այլ չիրականացած թոփափ տեսարանով: Դեպքից երկու օր առաջ Սմիթը մի գրություն է փակցնում իր դռանն այն մասին, որ նա պատրաստվում է թոչել հիվանդանոցի տանիքից՝ իր կապույտ մետաքսից պատրաստած թներով: Հիվանդանոցի բակում թեն շատ մարդ է հավաքված լինում, սակայն ոչ ոք նրան չի խանգարում իրականացնել այդ թոփափը: Մորիսոնը չի պատմում ցատկի հետևանքի մասին, այլ պարզապես ասում է, որ Ռոբերտ Սմիթը թոփափ կատարեց դեպի օդ: «Քաղաքի կենտրոնում հրշեջները հագնում էին իրենց վերարկուները, սակայն, երբ նրանք տեղ հասան, պարոն Սմիթը արդեն հասցրել էր տեսնել վարդագույն թերթիկները, լսել երաժշտությունը և ցատկել օդ» (3): Ինքնասպանությունը գիտակցված գործողություն է, իսկ

Մորիսոնը, լինելով մոզական ռեալիստ, չէր կարող վեպը սկսել մոզականությունից զուրկ ռեալիստական ինքնասպանության նկարագրությամբ: Ընդհակառակը՝ Սմիթը բարձրացել էր տանիք ոչ թե կյանքին վերջ տալու, այլ իր պատրաստած մետաքսե թևերով թռչելու նպատակով, և վեպի հետագա գործողությունները միմյանց զուգադրելով՝ կարող ենք վստահորեն փաստել, որ Մորիսոնը վեպը սկսում է ոչ թե ինքնասպանության, այլ ազատ թռիչքի ձգտման մոզական պատկերով:

Մոզական ռեալիզմի առանձնահատկություններից է ոչ պատահական դեպքերի զուգադրիությունները, որոնք որոշակի իմաստ են արտահայտում: Հենց այդպես, պատահականություն չէ այն, որ այդ նույն գիշերը, երբ Ռոբերթ Սմիթն իր չիրականացած թռիչքն է կատարում, սպիտականորթների հիվանդանոցում մի սևամորթ կին ծննդաբերում է վեպի գլխավոր հերոսին՝ Մեյքոն Դեդին, կարծես նրան հաղորդելով թռիչքն ավարտին հասցնելու առաքելությունը: Հետագայում Մեյքոնին բոլորն անվանում են Միլքմեն. բառացի հայերեն թագմանելով դա նշանակում է կաթնակեր, իսկ փոխաբերական իմաստով՝ մեկը, որը դեռ չի հասունացել: Թռիչքն այս վեպում ոչ միայն էթնիկ, այլ նաև անհատի ինքնությունը վերագտնելու խորհրդանշ է: Իր հերոսին Միլքմեն՝ Կաթնակեր անունը տալով՝ Մորիսոնը ուղղակիորեն շեշտում է այն միտքը, որ քանի դեռ մարդը չի իրականացրել ինքնուրույն թռիչք կատարելու իր որոշումը, նա հասուն չէ որպես անհատականություն:

«Սողոմոնի երգը» վեպի վերաբերյալ Մորիսոնն ասել է, որ այն մի մարդու մասին է, որը սովորում է թռչել, և սովորում է այն ամենը, ինչ կապված է թռիչքի հետ: Բայց այն նաև այն ճանապարհների մասին է, որոնց շնորհիվ մենք բոլորս բացահայտում ենք մեր ով և ինչ լինելը, այն է՝ մեր ինքնությունը, և թե որքան կարևոր և հուզիչ կարող են այդ ճանապարհները լինել (8):

Վեպը սեփական պատմությունից անտեղյակ և արմատներից կտրված աֆրոամերիկյան մի ընտանիքի մասին է, որի կրտսեր զավակն է Մեյքոն Դեդը՝ Միլքմենը: Նրա մայրը՝ Ռուբը, քաղաքում հայտնի բժշկի աղջիկ է, իսկ հայրը՝ ավագ Մեյքոնը, հաջողակ գործարար է, որի համար հարստություն ձեռք բերելը կյանքի շարժիչ ուժն է և գլխավոր նպատակը: Կուտակած ունեցվածքի շնորհիվ նա իրեն ապահով և ինքավստահ է զգում: Գրպանում նա պահում է իր տների բանալիները և յարված իրավիճակներում ձեռքի ափի մեջ սեղմում է դրանք ու շոյում՝ կարծես ուժ ստանալով դրանցից: Նա հավատում էր բանալիների մոզական ուժին: Բանալին որպես խորհրդանշան արվեստում տարբեր իմաստներ ունի. «Սողոմոնի երգը» վեպում այն ունեցվածքի, բայց նաև տան խորհրդանշան է: Իսկ տունն իր հերթին առնչվում է ընտանիքի և գերդաստանի հետ:

Միլլմենի հայրը հաջողակ մարդ է, որը, սակայն, չգիտի իր ընտանիքի պատմությունը: Եվ պատահական չէ, որ Մորիսոնը նրան նկարագրում է որպես մակերեսային և ցուցամոլ անձնավորության: Մեյքոնը վեպում սեփականատիրոջ կերպար է, որն իր ընտանիքի անդամներին նույնպես վերաբերվում է ինչպես իր սեփականությանը: Շաբաթ օրերին Մեյքոնը նրանց հետ գեղեցիկ հագնված սիրում էր մեքենայով շրջել քաղաքում, սակայն, ինչպես ներկայացված է վեպում «Դա ձև էր՝ ինքնաբավարարվելու համար և համոզվելու, որ ինքն իսկապես հաջողակ մարդ է» (3):

«Սողոմոնի երգը» վեպում գրեթե բոլորը անունները խորհրդանշական իմաստներ ունեն: Իրենց հերթին այդ անունները նկատելի ազդեցություն ունեն այդ կերպարների ինքնության ձևավորման և նրանց ճակատագրերի վրա: Պատահական չէ, օրինակ, որ այդ ընտանիքի բոլոր արական սեռի ներկայացուցիչները կրում են նույն Մեյքոն անունը, իսկ աղջիկների անունները Թոնի Մորիսոնը վերցրել է Աստվածաշնչից: Տղամարդկանց տալով նույն անունը՝ Մորիսոնը տարբեր կերպարների միջոցով կերտում է մեկ ընդհանրական կերպար, որն ի դեմս վեպի հերոսի՝ կրտսեր Մեյքոնի, արտահայտում է վեպի գլխավոր գաղափարը:

«Կին կերպարների անունները Աստվածաշնչից վերցնելով՝ Մորիսոնը ցույց է տալիս Աստվածաշնչի նշանակությունը սևամորթների կյանքում, և ընդգծում է նրանց ակնածանքն ու հարգանքը իրենց հավատքի նկատմամբ», - գրում է Մորիսոնի գրականության հետազոտող Քերոլին Դենարդը (1): Թերևս պետք է դրան հավելել, որ կանացի կերպարների անունները վերցնելով Աստվածաշնչից՝ Մորիսոնը դրանով նաև ուզում է ցույց տալ աֆրոամերիկացիների՝ որպես ժողովրդի, վաղնջականությունը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ Միլլմենի ազգանունը՝ Դեդ, որն անգլերեն նշանակում է մահացած, թյուրիմացության հետևանք է: Հարբած վիճակում գրասենյակային մի աշխատող սխալ է լրացնում փաստաթուղթը՝ ազգանվան համար հատկացված մասում գրելով «Դեդ»: Մորիսոնն այնքան պարզ և հստակ է հաղորդում իր ասելիքը, որ տարբեր մեկնաբանություններ, թերևս, լինել չեն կարող: Դեդ՝ «մահացած», ազգանունը տալով այդ ընտանիքին, Մորիսոնը պարզորեն ասում է, որ այդ տոհմաձառը կտրված է իր արմատից: Երբ Մորիսոնն իր պատումը կառուցում է այնպես, որ «մահացած» ածականը վերաբերում է մի ամբողջ գերդաստանի՝ դառնալով նրա ազգանունը, ավելին, երբ այդ գերդաստանը վեպում ընդհանրացվում է որպես աֆրոամերիկյան ժողովրդի ընդհանրական կերպար, դրանով Մորիսոնն ասում է, որ աֆրոամերիկյան ժողովուրդը կտրված է իր արմատներից: Եվ երբ իր վեպի հերոսին նա ուղարկում է որոնելու ընտանեկան ոսկին, որը խորհրդանշում է ընտանեկան ակունքները, նա ամբողջ աֆրոամերիկյան համայնքի

ակունքների որոնման և վերագտման հարցն է արծարծում: Իր վեպում Մորիսոնը ցույց է տալիս սևամորթների համար այդքան բաղձալի ազատության ուղին, որին հնարավոր է հասնել միայն սեփական մշակույթին և պատմությանը մոտենալու և այն ճանաչելու միջոցով:

Այսպիսով, Միլքմենի պապը սխալմունքով ստացել է Դեդ ազգանունը, որն էլ այնուհետև փոխանցվել է նրա զավակներին: Պապը, լինելով ոչ գրաճանաչ մարդ, դատեր անունը վերցնում է Աստվածաշնչից՝ բացելով պատահական էջ և վերցնելով այնտեղից առաջին պատահած անունը՝ Պիդատոս: Սակայն ի տարբերություն Աստվածաշնչի կերպարի, Թոնի Մորիսոնի վեպում Պիդատոսը, որը Միլքմենի հորաքույրն է, դրական կերպար է և ապրում է ավանդական երգերի ու հոգևոր արժեքների աշխարհում: Իր եղբոր տղային՝ Միլքմենին նա ծանոթացնում է Աֆրիկյան մշակույթին և դրանով նրան ոգեշնչում է հետաքրքրվել իր անցյալով: Վեպում Պիդատոսը ուժեղ և հաստատակամ կնոջ կերպար է: Նա մշտական կապի մեջ է իր հոր ուրվականի հետ, և հաճախ երգում է նրա համար: Նա միակն է վեպում, որը թեև իրենց ընտանիքի պատմությանը ծանոթ չէ, սակայն կապված է աֆրիկյան մշակույթին: Նրա տանը միշտ երգում են և, չնայած աղքատությանը, ապրում են բավարարված և երջանիկ: Միլքմենի պատկերացմամբ Պիդատոսը կարող էր թոչեւ, որովհետև ազատ էր և ամերիկյան հասարակության մեջ կարողանում էր ապրել աֆրիկյան մշակույթն իր մեջ կրելով, ինչի շնորհիվ էլ պահպանել էր իր ինքնությունը: «Նա կարողանում էր թոչեւ՝ մնալով երկրի վրա» (3): Երբ նա պատմում է իրենց ազգանվան պատմությունը, Միլքմենը հարցնում է, թե ինչու իր պապը չի ուղղել սխալը և չի վերականգնել իրենց իրական ազգանունը, ինչին Պիդատոսը պատասխանում է, որ այդ ժամանակ նրա կնոջը պարզապես դուր է եկել նոր ազգանունը և նա է ասել, որ. «Եթե սխալը թողնես, որ մնա, ապա այն կջնջի անցյալի մասին հիշողությունը: Ամեն ինչ անցյալից այն կջնջի» (3): Մորիսոնն այս երկխոսությամբ ասում է, որ երբեմն անցյալը կարող է այնքան տխուր լինել, որ ցանկանաս մոռանալ այն, և ամենակարևորը, Մորիսոնը փաստորեն նշում է, որ անցյալը հնարավոր է ջնջել կամ փոխել ընդամենը սխալ ուղղադրությամբ: Երբեմն դա լինում է գիտակցված, երբեմն չգիտակցված, սակայն այուրթի հետագա զարգացմամբ Մորիսոնը ցույց է տալիս, որ պատմությունից, անցյալից և հիշողություններից փախչելը ոչ միայն անցյալի կորուստ է, այլև՝ ապագայի: «Դեդ» ազգանունը հետապնդում է Միլքմենին իր ողջ կյանքի ընթացքում: Նրա շրջապատում միշտ լինում են մարդիկ, որոնք ուզում են, որ նա մահանա կամ փորձում են նրան սպանել: Մոր հետ զրույցներից մեկի ընթացքում նա իմանում է, որ նույնիսկ իր հարազատ հայրը ցանկացել է, որ նա չծնվի և միայն հորաքրոջ՝ Պիդատոսի շնորհիվ է, որ նա լույս աշխարհ է

եկել: Միլքմենի մահն է տենչում նաև իր զարմիկը, Պիդատոսի դուստրը՝ Ագարը, ում հետ սիրավեպ է ունեցել: Անգամ նրա մտերիմ ընկերը՝ Գիթարը Բեյնսը հետապնդում է նրան և սպանության փորձեր անում:

Վեպում Միլքմենի՝ որպես անհատի, ձևավորումը տեղի է ունենում ընթերցողի աչքի առջև: Նա որոշում է ազատվել ծնողների հսկողությունից և գնում է հոր և հորաքրոջ գծտության և բաժանման պատճառ դարձած ոսկին գտնելու: Թոնի Մորիսոնը Միլքմենի ոսկու որոնումները վերածում է ընտանեկան արմատների և ինքնության որոնման, որի արդյունքում էլ նա գտնում է հոգեկան ներդաշնակություն և կյանքին հավիտենականության տեսանկյունից նայելու ունակություն: Եվ հենց այստեղ է կապը Աստվածաշնչյան Սողոմոն Իմաստունի կերպարի հետ: Աստվածաշնչում Սողոմոնը Աստծուց իմաստություն է խնդրում և այդպիսով ձեռք է բերում նաև հարստություն և փառք: Ըստ Սողոմոնի՝ մարդը պետք է փնտրի իմաստություն այնպես, ինչպես նա կփնտրեր ոսկի: Մակայն այն գտնելը հեշտ չէ: Իմաստությունը, ինչպես և ոսկին գտնելու համար բազմաթիվ փորձություններ և դժվարություններ պետք է հաղթահարել: Այն գտնվում է ոչ թե մակերեսին, այլ թաքնված է խորքում՝ բազմաթիվ շերտերի տակ: Մակայն իմաստությունը գտնելուն պես հարկավոր է այն գնահատել ավելի, քան ոսկին կամ ցանկացած այլ հարստություն:

Ճանապարհորդության ընթացքում Միլքմենը հանդիպում է տարբեր մարդկանց: Պատմությունները, որ նա լսում է, թվում է, թե որքան մոտեցնում, այնքան էլ հեռացնում են նրան իր նպատակից: Ժամանակի ընթացքում փոփոխվում է նաև նպատակը: Ծանոթություններից մեկի ժամանակ նրան հրավիրում են որսորդության: Անտառում, Միլքմենն արդեն հոգնած և մտքերի տարափից մոլորված նստում է ծառերից մեկի մոտ: «Նրա աջ և ձախ կողմերից դուրս էին եկել ծառի արմատները, որոնք կարծես գրկում և քնեցնում էին նրան: Կայում էին նրան՝ ծակոդ, բայց միևնույն ժամանակ իր պապի ջերմությունը հիշեցնող ձեռքերով: Թուլացած, սակայն միևնույն ժամանակ զգոն, նա մտքեց իր մատները խոտերի մեջ: Նա փորձում էր մատների ծայրով հասկանալ, թե ինչ է նրան ասում հողը, եթե այն կարողանում է խոսել: Եվ հողը՝ նրան զգուշացրեց, որ ինչ-որ մեկը կանգնած է ետևում և ինքը պետք է առանց ժամանակ կորցնելու բարձրացնի ձեռքը և բռնի այն լարը, որը փաթաթվելու է իր կոկորդին» (3): Այդպիսով, անտառում միաձուլվելով բնությանը և զգալով արմատների և հողի ուժը, Միլքմենը կարողանում է պաշտպանվել և փրկվել: Նրան ցանկանում էին սպանել ընկերը՝ Գիթարը և զարմիկը՝ Ագարը:

Միլքմենի ընտանիքի պատմությունը նման է փշրված խճանկարի, որի կտորները վեպի գործողությունների ընթացքում դժվարությամբ հավաքվելով իրար են միանում, սակայն մի կտորի կորսված լինելու

պատճառով ամեն անգամ խճանկարը կրկին քանդվում է: Վեպի վերջում, սակայն, պատկերն ամբողջանում է, երբ Միլքմենը, հայտնվելով հեռավոր քաղաքներից մեկում, լսում է երեխաների երգը Սողոմոնի մասին: Խորհրդանշական է, որ Միլքմենին իրականությունը բացահայտելուն օգնում է հենց Սողոմոնի երգը: Մինչ այդ երգը լսելը, Միլքմենն արդեն որոշ տեղեկություններ ուներ իր նախնիների մասին, սակայն դրանք համադրելիս միշտ ի հայտ էին գալիս միմյանց հակասող որոշ դրվագներ, և պատմությունն այդպես էլ ամբողջական և հավաստի պատկերի չէր վերածվում: Միլքմենը գիտեր, որ իր մեծ պապի անունը Սողոմոն է եղել, և, որ այդ քաղաքում գրեթե բոլոր տղամարդիկ Սողոմոն անունն են ունեցել: Սակայն ուշադիր լսելով երգի խոսքերը՝ նա հանկարծ բացահայտում է իր մեծ պապի մասին առասպելը և, հիշելով խոսքերը, նա կարողանում է վերծանել երգի գաղտնաբառերը, ինչի շնորհիվ էլ քանդվում է Միլքմենի մտքի խճճված կծիկը: Ավանդույթի շնորհիվ երեխաներին հասած երգի խոսքերը վերծանելով՝ Միլքմենը գտնում է բոլոր գաղտնիքները բացող բանալին և ծանոթանում իր պապի մասին պատմող պատմություններին, որոնք բոլորը վկայում էին, որ նա կարողացել է թոչել: Մանկուց փայփայած թոչելու իր երազանքը դառնում է հնարավոր: Եթե նախկինում նա ամաչում էր իր ազգանունից և առավել ևս պիտակի նման իրեն կպած Միլքմեն մականունից, հիմա նա սկսում է հպարտանալ իր ծագումով: «Նա վազեց դեպի կրպակը և փեղկերի ապակիներին տեսավ իր արտացոլանքը: Նա ժպտում էր մինչև ականջները: Աչքերը փայլում էին: Նա երբեք նախկինում այդքան ոգևորված և երջանիկ չէր եղել»: Միլքմենը վազում է նորահայտ բարեկամուհու մոտ, որպեսզի ճշտի այդ պատմության իսկությունը. «Երբ դուք ասում եք, որ նա թոչել է, նկատի ունեք, որ փախել է, - Ոչ, երբ ասում եմ թոչել է, նկատի ունեմ, որ նա թոչել է: Ես իհարկե հասկանում եմ, որ դա կարող է անհեթեթություն թվալ, բայց պատմությունը մեզ հասել է այնպես, որ նա իսկապես թոչել է: Նա թոչել է օդում. Թոչել է ինչպես... թոչունը: Պարզապես կանգնել է դաշտի մեջտեղում, մեկ երկու պտույտ արել և այնուհետև թոչել է: Թոչել այնտեղ, որտեղից եկել էր»: Վեպի այս նկարագրությունը ասոցացվում է «Թոչող աֆրիկացու լեգենդի» հետ:

«Սողոմոնի երգը» վեպի ավարտը շատ ազդեցիկ է: Միլքմենն իր հորաքրոջ՝ Պիդատոսի հետ գնում է հողին հանձնելու իր պապու ոսկորները: Պիդատոսն իր ականջօդը, որի մեջ պահում է հոր ձեռքով երբևէ արտաստպած միակ բառը՝ իր անունը, հանում և դնում է հողի մեջ: Երբ նրանք պատրաստվում են հեռանալ, լսվում է կրակոց: Գիթարը, որն ուզում էր սպանել Միլքմենին, վրիպելով սպանում է Միլքմենի հորաքրոջը՝ Պիդատոսին, որն արդեն մահամերձ՝ խնդրում է Միլքմենին երգել: Միլքմենը երգում է այնպես բարձր, կարծես հավատում է, թե երգը

կկարողանա իր սիրելի հորաքրոջը պահել երկրի վրա: Այդ ժամանակ Պիղատոսը ասում է. «Ես ավստոսում եմ, որ քիչ մարդկանց եմ ճանաչել: Ես նրանց բոլորին կսիրեի: Ավելի շատ ճանաչեի, ավելի շատ կսիրեի» (3): Պիղատոսը մահանում է: Հանկարծ մի թռչուն է գալիս, և կտուցով հողից վերցնում ականջօղն ու թռչում: Պիղատոսի կյանքն էլ նման էր թռիչքի, և ականջօղը, որի մեջ նա պահել էր իր անունը, այսինքն իր ենն ու ինքնությունը, թռչունը տանում է վեր՝ դեպի երկինք, դեպի հավերժություն:

Թռիչքի շուրջ մտորումները Միլքմենին ուղղորդում են վեպի ամբողջ ընթացքում: Դեռևս այն ժամանակ, երբ Միլքմենի ու Գիթարի ընկերությունը չէր վերածվել թշնամանքի, մեկ անգամ զրուցելիս նրանք սիրամարգ են տեսնում, և Միլքմենն ասում է. «Ինչ հետաքրքիր է, այսպիսի գեղեցիկ թռչուն է, իսկ թռչում է հավից ոչ բարձր»: Գիթարը պատասխանում է, որ դա այն պատճառով է, որ պոչը շատ մեծ է: Այդ բոլոր զարդերն ու հարստությունը նրան ցած են քաշում: Այդպես էլ ցած է քաշում սնափառությունը: Այդպիսի բեռով չես թռչի: Եթե ուզում ես թռչել, պետք է վրայիցդ գցես ամեն տեսակ աղբը, որպեսզի այն քեզ ցած չքաշի» (3):

Մորիսոնը վեպում բարձրացնում է նաև էթիկական հարցեր՝ կապելով ազատության և երջանկության հոգեվիճակը անհատականության և էթնիկ ինքնության ճանաչողության հետ: Միլքմենը գտնում է այն, ինչը փնտրում էր իր ինքնությունը՝ ձեռք բերելով ազատություն և երջանկություն: Եվ, այդուհանդերձ, վեպի ավարտը կարելի է համարել երջանիկ և միևնույն ժամանակ՝ դրամատիկ: Միլքմենը, կանգնելով ժայռի գագաթին, ձայնում է դիմացի ժայռին կանգնած ընկերոջը, որ, եթե նրա ուզածն իր կյանքն է, ապա նա կարող է այն տալ նրան: Ընկերն ատրճանակը ցած է դնում, սակայն դա այլևս նշանակություն չունի, որովհետև Միլքմենն արդեն հասցրել էր ժայռից նետվել և կամ թռչել դեպի անհուն տարածություն:

Եզրակացություններ

Թոնի Մորիսոնը մոզական ռեալիստ է անկախ այն հանգամանքից, համարում է ինքն իրեն այդ ուղղության հետևորդ, թե ոչ: Պետք է գնահատել նրա գրականությունը և ոչ թե այն, թե ինչ է ինքն ասում իր գրականության մասին: Իսկ նրա գրականությունը և այս դեպքում «Մոդոմոնի երգը» վեպը առաջին պարբերությունից մինչև վերջինը հազեցած է Մոզական ռեալիզմին բնորոշ այլաբանությամբ, խորհրդանշական, պայմանական և բազմանշանակ պատկերներով: Վեպի վերջում Միլքմենն ասում է իր ընկերոջը՝ Գիթարին, որ եթե նրան իր կյանքն է պետք, ապա նա կարող է դա տալ նրան: Դրանք պարզապես խոսքեր չեն. նա, իսկապես, թռիչք է կատարում ժայռից: Վեպի ավարտը բազմանշանակ է և դա նույնպես բնորոշ է մոզական ռեալիզմին: Վեպի տրամաբանության համատեքստում դա կարելի է համարել թռիչք: Դա կարող է նշանակել նաև, որ Միլքմենն արդեն

հասել է կյանքի իմաստավորման այն աստիճանին, երբ ձեռք է բերել ավելի կարևոր բան, քան զուտ ֆիզիկական կյանքն է: Իսկ ի՞նչը կարող է դրանից ավելի արժեքավոր լինել. հավերժությունը, որի գիտակցմանը Միլքմենը հասնում է՝ լսելով իր ակունքներից եկող Մոդոմոնի երգը: Պետք է նկատել, որ միայն թռիչքի խորհրդանշական պատկերի միջոցով չէ, որ Մորիսոնն արտահայտում է հավերժության գաղափիրը: Դա արտահայտվում է նաև ծառի և նրա արմատների խորհրդանշական իմաստների օգտագործմամբ: Ծառը՝ տոհմի, իսկ արմատները՝ որպես պատմության խորհրդանիշ են հանդիսանում: Ծառի արմատները, «որոնք կարծես գրկում և քնեցնում էին նրան: Կաշում էին նրան՝ ծակոդ, բայց միևնույն ժամանակ իր պապի ջերմությունը հիշեցնող ձեռքերով»: Վեպի գեղարվեստորեն արտահայտված գաղափարաբանությունը հետևյալն է. մարդը լիարժեք է իր ակունքների հետ կապի մեջ, իսկ այդ ակունքները, ինչպես ծառի արմատները, խորանում են հողի մեջ:

Վեպը սկսվում է անավարտ թռիչքի պատկերով և ավարտվում է Միլքմենի ցատկով: Եթե մենք դա դիտարկենք ոչ թե որպես թռիչք, այլ որպես ինքնասպանություն, ապա կվերանա ոչ միայն վեպի ամբողջ գաղափարական հենքը, այլև անիմաստ կդառնա վեպի պլոտեն: Այդ դեպքում Թոնի Մորիսոնին պետք է համարեինք աբսուրդի գրականության հետևորդ, որի հետ սակայն նրա ստեղծագործությունը որևէ աղերս չունի: Հետևաբար, պետք է նշել, որ վեպն ավարտվում է գլխավոր հերոսի թռիչքով դեպի ինքնաճանաչողություն և դրա միջոցով դեպի հավերժություն, որովհետև երբ մահն այլևս չի վախեցնում նրան, նշանակում է, որ նա հասել է դեպի հավերժություն տանող սահմանը: Մոգական ռեալիզմը Մորիսոնի գրականության էությունն է: Իսկ մոգական ռեալիզմում իրականություն է դառնում ամենաանիրականը: Նրա գրականության մեջ առկա են բոլոր այն հատկանիշները, որոնք բնորոշ են Մոգական ռեալիզմին՝ որպես ուղղության և գեղարվեստական մեթոդի: Իսկ «Մոդոմոնի երգը» վեպը իրավամբ պետք է համարել Մոգական ռեալիզմի վառ օրինակ: Վեպում Մորիսոնի փիլիսոփայությունը միաձուլված է գեղարվեստական պատկերայնությանը և դժվար է գտնել դրանց միջև սահմանը. ճիշտ այնպես, ինչպես դժվար է տեսնել սահմանը, որը բաժանում է երևակայությունը իրականությունից:

REFERENCES

1. Denard, Carolyn C. (2008), Toni Morrison: Conversations. UP of Mississippi.
2. Hungerford Amy. (2010), Post Modern Belief: American Literature and Religion Since 1960. Princeton UP.
3. Morrison Toni, Song of Solomon. New York: A Plume Book, 1987. Print. https://www.oasisacademysouthbank.org/uploaded/South_Bank/Curriculum/Student_Learning/Online_Library/KS4/Toni_morrison/Song_of_Solomon_by_Toni_Morrison.pdf?fbclid=IwAR20U0IvOz8ioEJZOwDIhtr0BKeK_F9VH5x9QSho5sY7aJnS4YCAO1P8TIgeISBN: 978-0-307-38812-4
4. Lois Tyson (2001). Learning for a Diverse World: Using Critical Theory to Read and Write about Literature. Psychology Press. pp. 208–209. ISBN 978-0-8153-3774-4.
5. Mel Watkins. Talk with Toni Morrison. New York Times. Sep.11.1977. <https://www.nytimes.com/1977/09/11/archives/talk-with-toni-morrison.html> (3.3.2022)
6. Reynolds Price, From the Book Review Archives. Review: ‘Song of Solomon,’ by Toni Morrison. New York Times. Oct. 21. 2021. Review first published Sept. 11, 1977 <https://www.nytimes.com/2021/10/21/books/review/song-of-solomon-toni-morrison.html> (3.3.2023)
7. Ralph Story. An Excursion into the Black World: The "Seven Days" in Toni Morrison's Song of Solomon. Source: Black American Review (St. Luis University) <http://commons.hostos.cuny.edu/wp-content/uploads/sites/77/2017/02/The-Seven-Days-in-Song-of-Solomon.pdf>
8. <https://www.cliffsnotes.com/literature/s/song-of-solomon/about-song-of-solomon>
9. <https://patricktreardon.com/book-review-song-of-solomon-by-toni-morrison/?fbclid=IwAR26cW1b8ynt5tieR9u4bwtEj5SO6dkVEoJ9M2cqZelypuDPG9icF19BJrw> 3.12.2022
10. Isaacs H. R. The American Negro and Africa, some notes // The Phylon. – Atlanta, Ga, 1959. – Vol.20, N 3.
11. Clarke J.H. A search for identity; Mode of access; URL: https://archive.org/stream/J.H.ClarkeCollectedWritings/J.%20H.%20Clarke%20-%20Collected-Writings_djvu.txt

12. Shomburg A. (1925), The Negro Digs up his past // The new Negro / Ed. by A. Locke. – N.Y.: Albert a. Charles Boni.

Гаяне Егиазарян, Ани Асланян

Тема связи между личностью и свободой в романе

Тони Моррисон «Песнь Соломона»

Заключение

Ключевые слова и выражения: Тони Моррисон, магический реализм, современная американская литература, роман «Песнь Соломона», этническая идентичность

В статье представлена идеология романа «Песнь Соломона» через анализ его сюжета, персонажей, посыла и художественных выражений, в которых центральной является идея связи индивидуальной и этнической идентичностей. Представлен авторский посыл, в котором вопрос сохранения этнической идентичности является центральным. Идея свободы символизируется в романе через полет человека к своим этническим истокам. Моррисон приравнивает идеи свободы и идентичности, и обсуждает идею вечности. В современном быстро меняющемся мире, когда научно-технический прогресс и процессы глобализации оказывают свое непосредственное влияние на психологию и образ жизни современного человека, сохранение идентичности можно считать одной из задач, стоящих перед человечеством. Идентичность личности, которая также востребована наряду с этнической идентичностью, стала одной из уязвимых проблем современного мира, решение которой зависит от вопроса существования народов с разными культурами. Естественно, что эта проблема больше волнует малые страны, которым труднее противостоять давлению глобализации. На смену богатым традициями и особенностями национальным культурам приходит выровненная социокультурная модель современной жизни.

Роман был исследован и с точки зрения методологии магического реализма, выявив черты, характерные для этого направления. Использование символов является особенностью магического реализма, которое как бы помогает Тони Моррисон донести до читателя идею произведения. В исследовании также был использован семиотический метод, посредством которого символы и аллегорические образы в романе были выделены и изучены как компоненты символической системы.

Gayane Yeghiazaryan, Ani Aslanyan

**The theme of the connection between identity and freedom
in Toni Morrison's 'Song of Solomon'**

Conclusion

Key words and expressions: Toni Morrison, Magical realism, modern American literature, the novel 'Song of Solomon', ethnic identity.

Folklore plays an important role in the life and culture of African-Americans. The novel "Song of Solomon" is based on various stories, myths and legends, particularly the Biblical "Song of Song", the myth of the flying African and the folk tale. The main message of the novel is to be close to the roots. The importance is the role of ethnic self-awareness in the formation and completeness of the personality.

The article presents the ideology of the novel "Song of Solomon" through an analysis of its plot, characters, message and artistic expressions, in which the central idea is the connection of individual and ethnic identities. The author's message is presented in which the issue of preserving ethnic identity is central. The idea of freedom is symbolized in the novel through a person's flight to his ethnic origins. Morrison equates the ideas of freedom and identity, and discusses the idea of eternity. In today's rapidly changing world, when scientific and technological progress and globalization processes have a direct impact on the psychology and lifestyle of modern man, preserving identity can be considered one of the tasks facing humanity. Personal identity, which is also in demand along with ethnic identity, has become one of the vulnerable problems of the modern world, the solution of which depends on the issue of the existence of peoples with different cultures. Naturally, this problem is of greater concern to small countries, which find it more difficult to resist the pressure of globalization. The novel was also studied from the point of view of the methodology of magical realism, revealing features characteristic of this direction. The use of symbols is a feature of magical realism, which seems to help Toni Morrison convey the idea of the work to the reader.

Գայանե Եղիազարյան – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ լեզվամշակութաբանություն, խոսույթի տեսություն, անգլիական և ամերիկյան գրականություն, համեմատական գրականագիտություն: 103 գիտական աշխատությունների հեղինակ է: gyeghiazaryan1@hotmail.com

Гаяне Егиазарян - Доктор филологических наук, профессор, заведующий кафедрой английского языка Государственного университета имени Брюсова. Круг научных интересов: лингвистика, теория дискурса, английская и американская литература, сравнительное литературоведение. Автор 103 научных работ. gyeghiazaryan1@hotmail.com

Gayane Yeghiazaryan - Ph.D., professor, Head of the Department of English at Brusov State University. The range of scientific interests: Linguistics, discourse theory, English and American literature, comparative literature. Author of 103 scientific works. gyeghiazaryan1@hotmail.com

Անի Ասլանյան – Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի ամբիոնի դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ժամանակակից գրականություն, ամերիկյան և անգլիական գրականություն, մոգական ռեալիզմ, համեմատական գրականագիտություն: Հեղինակ է 5 գիտական հոդվածի: ani_aslanyan@yahoo.com

Ani Aslanyan - Lecturer of the Department of English at Brusov State University. Scientific interests: modern literature, American and English literature, magical realism, comparative literature. Author of 5 scientific articles. ani_aslanyan@yahoo.com

Ани Асланян - Преподаватель кафедры английского языка Государственного университета имени Брюсова. Круг научных интересов: современная литература, американская и английская литература, магический реализм, сравнительное литературоведение. Автор 5 научных статей, ani_aslanyan@yahoo.com

*Խմբագրություն է ուղարկվել 24.10.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 05.11.2023թ.
Հրապարակման է ներկայացվել 10.01.2024*